ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՁԵՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ[1]

Հայկ Կեսոյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Յուրաքանչյուր պետության ժողովրդավարական քաղաքական ռեժիմի կենսունակության հիմնաքարերից մեկը ինստիտուցիոնալ առումով կայացած գործունեության իրավական և քաղաքական երաշխիքներով օժտված քաղաքական ընդդիմության առկայությունն է: Լայն առումով, ժողովրդավարական պետություններում քաղաքական ընդդիմության հիմնական խնդիրներն են՝ իշխանությանը առաջարկել այլընտրանքային լուծումներ և վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության գործունեության նկատմամբ: Ժողովրդավարության պայմաններում քաղաքական ընդդիմության կարևորության ընդգծման տեսանկյունից դիպուկ է Լ. Վիոլենտի այն դիտարկումը, ըստ որի՝ *«ժողովրդավարությունը շնչում է երկու թոքերով՝ մեկը իշխանությունն է, մյուսը՝ ընդդիմությունը»*[2], իսկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2008 թվականի 1601 բանաձևում նշվում է, որ *«յուրաքանչյուր պետություն ունի կառավարություն, սակայն միայն ժողովրդավարականներն ունեն ընդդիմություն»*[3]:

Կառավարման խորհրդարանական ձևի դեպքում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների ու հավասարակշռության մեխանիզմների և սահմանադրական հավասարակշռության ապահովման գործում առանցքային դերակատարություն ունի պառլամենտական ընդդիմությունը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարման խորհրդարանական ձևի դեպքում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերին իրականում «միավորում» է պառլամենտում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը: Այդ պարագայում հիմնավոր է դառնում այն մտահոգությունը, որ պառլամենտը չի դրսևորի բավարար քաղաքական կամք՝ իր ձևավորած գործադիր իշխանության նկատմամբ իրական պառլամենտական վերահսկողություն իրականացնելու համար, այլ *պառլամենտական վերահսկողություն կիրականացվի այնքանով, որքանով դա չի հակասի իշխող կուսակցության ընդհանուր շահերին և առաջնահերթություններին:*

Ուստի գտնում ենք, որ կառավարման խորհրդարանական ձևի դեպքում պառլամենտական մեծամասնությանը զսպելու և հավասարակշռելու գործում առանցքային դերակատարություն պետք է ստանձնի պառլամենտական ընդդիմությունը, որը իր առջև դրված խնդիրները լուծելու համար պետք է ունենա սահմանադրաիրավական մակարդակով երաշխավորված կարգավիճակ, գործառույթների և լիազորությունների բավարար շրջանակ և գործունեության երաշխավորման գործուն կառուցակարգեր:

---

[1] Աշխատանքը կատարվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի հաստատած 18T-5E130 գիտական հետազոտական թեմայի շրջանակներում:

[2] Տե՛ս **Luciano Violante,** «At the seminar on the rules of procedures and forms of government of the 1990s», Rome, Italy, 20 April 2011

[3] Տե՛ս **Resolution 1601 of the Council of Europe,** «Parliamentary Assembly on procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament», 2008:

Սույն հոդվածի հետազոտության առարկան հստակեցնելու նպատակով անհրաժեշտ է տարանջատել «քաղաքական ընդդիմություն» և «պառլամենտական ընդդիմություն» եզրույթները, քանի որ դրանք նույնաբովանդակ չեն: «Քաղաքական ընդդիմություն» եզրույթը առավել ընդգրկուն է և ներառում է ինչպես պառլամենտական, այնպես էլ արտապառլամենտական ընդդիմադիր քաղաքական ուժերը: «Պառլամենտական ընդդիմություն» եզրույթը ավելի նեղ է և պարունակում է պառլամենտում ներկայացված, սակայն կառավարության կազմում չընդգրկված և կառավարության պատասխանատվության բեռը չկրող քաղաքական ուժերը[1]:

Հարկ է նշել, որ այս եզրույթները ունեն ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքագիտական բովանդակություն, այդ պատճառով քաղաքական ընդդիմության և պառլամենտական ընդդիմությանը վերաբերող հարցերը ուսումնասիրում են ոչ միայն իրավագիտությունը, այլ նաև քաղաքագիտությունը: Քաղաքագիտությունը քաղաքական ընդդիմության կարգավիճակը ուսումնասիրում է քաղաքագիտական տեսանկյունից՝ այն դիտարկելով որպես քաղաքական ինստիտուտ, իսկ իրավագիտությունը հիմնականում քննարկում է պառլամենտական ընդդիմության կարգավիճակի հետ կապված հարցերն իրավական տեսանկյունից, որպես սահմանադրական-իրավական ինստիտուտ: Սույն հոդվածի շրջանակներում առավելապես ուսումնասիրվել է խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող խնդիրները:

Պառլամենտական ընդդիմության կարգավիճակը խորհրդարանական միապետություններում (վեստմինիսթրյան մոդել) և հանրապետություններում (կոնսենսուս մոդել) որոշակիորեն տարբեր է: Ընդհանուր առմամբ, խորհրդարանական միապետություններում պառլամենտական ընդդիմությունը առավել ազդեցիկ է՝ պայմանավորված այդ պետությունների իրավական համակարգերին բնորոշ առանձնահատկություններով: Քննարկենք մի քանի օրինակներ. այսպես, խորհրդարանական միապետություններում, որպես կանոն, գործում է «կաբինետի ընդդիմադիր առաջնորդի» պաշտոնը[2], օրինակ՝ Մեծ Բրիտանիայում և Նոր Զելանդիայում պառլամենտական ամենամեծ ընդդիմադիր կուսակցության ղեկավարը ճանաչվում է ընդդիմության առաջնորդ և ստանում է բավականին բարձր վարձատրություն[3]: Այս համակարգի առանձնահատկություններից է այն, որ պառլամենտական ընդդիմությունը, սովորաբար, ձևավորում է «ստվերային կաբինետ» (սպասող կաբինետ), որում հիմնականում ընդգրկվում են այն անձիք, ովքեր առաջիկա պառլամենտական ընտրություններում հաղթելու դեպքում հավակնում են դառնալ ձևավորվող կաբինետի անդամներ: Անգլոսաքսոնական իրավական համակարգի պետություններում պառլամենտական ընդդիմության ազդեցիկ դերակատարությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկն էլ այն է, որ այդտեղ, որպես կանոն գործում է զարգացած երկուսակցական համակարգը, որի շնորհիվ թե՛ իշխող և թե՛ ընդդիմադիր կուսակցությունները ինստիտուցիոնալ առումով առավել կայացած են և կարող են հավասարակշված գործել:

Խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության կարգավիճակները տարբեր են՝ սկսած իրապես գործող պառլամենտական

---

[1] Տես **European commission for democracy through law**, «On the role of the opposition in a democratic parliament», CDL-DEM (2010)001, Strasbourg, October 2010

[2] Այսպիսի դրույթ գործում է նաև Մալթայում, որտեղ ընդդիմության առաջնորդին նշանակում է հանրապետության նախագահը: Այդ պաշտոնում նշանակվում է պառլամենտում ամենամեծ ընդդիմադիր կուսակցության ղեկավարը (սահմանադրության 90-րդ հոդված):

[3]Օրինակ՝ Անգլիայում ընդդիմության առաջնորդը տարեկան ստանում է 119 հազար ֆունտ, պառլամենտի ստորին պալատի նախագահը՝ 124 հազար ֆունտ, իսկ վարչապետը՝ 171 հազար ֆունտ: Նոր Զելանդիայում ընդդիմության առաջնորդը տարեկան ստանում է 162 հազար դոլար, վարչապետը՝ 244 հազար դոլար, հասանելի էր՝ https://www.legco.gov.hk/yr02-03/english/sec/library/0203rp01e.pdf

ընդդիմության առկայությունից, մինչև ֆորմալ առումով սահմանադրական երաշխիքներ ունեցող, սակայն ոչ արդյունավետ գործող ընդդիմություն[1]: Ուստի այն պետություններում, որտեղ պառլամենատական ընդդիմությունը ինստիտուցիոնալ առումով բավարար կայացած չէ, առաջնային պլան է մղվում պառլամենտական ընդդիմության դերակատարություն բարձրացնելու և կայացնելու հիմնախնդիրը:

Պետությունում պառլամենտական ընդդիմության չկայացվածությունը և ոչ արդյունավետ գործունեությունը անխուսափելիորեն հանգեցնում են «ներկայացուցչական ժողովրդաիշխանության ճգնաժամի», որի հետևանքով «պարարտ հող է» ստեղծվում արտապառլամենտական ընդդիմության դերակատարության ընդլայնման համար[2]:

Պետությունում լայն առումով քաղաքական, իսկ առավել նեղ առումով պառլամենտական ընդդիմության կայացման վրա ազդում են մի շարք գործոններ: Այս մասին բավականին դիպում է Ռ. Դալի՝ «Քաղաքական ընդդիմությունը արևմտյան դեմոկրատիաներում» աշխատությունում վեր հանված պառլամենտական ընդդիմության ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները. ըստ նրա՝ այդ գործոններն են՝ սահմանադրական կարգը և ընտրական համակարգը, քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, կառավարության նկատմամբ հասարակության մեջ առկա դժգոհության աստիճանը, զանգվածային գիտակցության առանձնահատկությունները՝ պայմանավորված ընդդիմություն-կառավարություն փոխհարաբերությունների բնույթով, և հասարակության բևեռվածության աստիճանը[3]:

Պետությունում պառլամենտական ընդդիմության կայացումը պայմանավորող գործոնների մեջ առանցքային կարևորություն ունի ***պառլամենտական ընդդիմության կարգավիճակի իրավական երաշխավորումը:*** Պառլամենտական ընդդիմության գործունեության իրավական երաշխավորումը ենթադրում է սահմանադրաիրավական հարթության վրա նրա կարգավիճակի ճանաչում և այդ կարգավիճակից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ լիազորությունների վերապահում:

Պառլամենտական ընդդիմության գործունեության իրավական երաշխավորման խնդիրը միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպայի խորհրդի[4], պառլամենտների նախագահների եվրոպական խորհրդաժողովի[5], միջպառլամենտական միության [6] (Inter-parliamentary union) ուշադրության կենտրոնում է: Սակայն,

---

[1]Տես **European commission for democracy through law**, «On the role of the opposition in a democratic parliament», CDL-DEM (2010)001, Strasbourg, October 2010.

[2] Տես եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Արտախորհրդարանական դերակատարները ժողովրդավարական պետությունում» զեկույցում այդպիսի դերակատարություն է վերապահվել քաղաքացիական հասարակության տարբեր դրսևորումների, տե՛ս **Council of European Parliamentary Assemble**, «Extra-institutional actors in the democratic system» report, 4 June 2010(Doc. 12278)

[3]Տես, **Robert Alan Dahl,** «Political Oppositions in Western Democracies», Yale University Press, 1966, 196p.

[4] 2008 թվականին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունվել է **«ժողովրդավարական պառլամենտում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ղեկավար սկզբունքները»** սահմանող 1601 բանաձևը, 2010 թվականին ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակվեց **«Ընդդիմության դերը ժողովրդավարական պառլամենտում»** զեկույցը

[5]2014 թվականին Օսլոյում տեղի ունեցած պառլամենտների նախագահների եվրոպական խորհրդաժողովում քննարկվող հիմնական հարցերից մեկը նվիրված է եղել «Ժողովրդավարության պայմաններում իշխանության և ընդդիմության միջև հավասարակշռության ապահովման» թեմային, հասանելի էր՝ http://website-pace.net/documents/10643/1166760/20140911-ProcOsloT3-EN.pdf/7f5cd49f-f1bb-446c-8dcc-037e25f4b4c7

[6]Միջպառլամենտական միությունը 1999թ. հրատարակել է **«Պառլամենտական ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ»** ուղեցույց, հասանելի էր՝ http://archive.ipu.org/english/sur99-97.htm#Gabon

դրանով հանդերձ, հատկանշական է Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) այն արձանագրումը, որ միջազգային մակարդակով գոյություն ունեն սակավաթիվ ստանդարտներ, որոնք միտված են խորհրդարանական ընդդիմության պաշտպանությանը, ուստի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է հետամուտ լինել ժողովրդավարության ինստիտուտների արդիականացմանը՝ պառլամենտական ընդդիմությանը համապատասխան գործիքակազմ և միջոցներ տրամադրելու միջոցով:

Պառլամենտական ընդդիմության կարգավիճակի իրավական երաշխավորմանը վերաբերող ներպետական կարգավորումները խորհրդարանական հանրապետություններում տարբեր են: Եվրոպական պետությունների սահմանադրություններում պառլամենտական ընդդիմության կարգավիճակին վերաբերող դրույթներ, որպես կանոն, առկա չեն[1], իսկ «ընդդիմություն» եզրույթը հազվադեպ է օգտագործվում[2]: Սակայն, պետությունների սահմանադրություններում կան որոշակի դրույթներ, որոնք պառլամենտական ընդդիմությանը առանձին լիազորություններ են վերապահում:

Պառլամենտական ընդդիմության իրավական կարգավիճակը սահմանված է կա՛մ պառլամենտի կանոնակարգը սահմանող օրենքով[3], կա՛մ պառլամենտական ընդդիմության մասին առանձին օրենքով[4]: Սակայն նշված օրենքները որոշ դեպքերում պառլամենտական մեծամասնությունը կարող է հեշտությամբ փոփոխել, որը հանգեցնում է պառլամենտական ընդդիմության գործունեության երաշխիքների թուլացման:

Պառլամենտական ընդդիմության գործունեության երաշխիքների ամրապնդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի պառլամենտական ընդդիմության կարգավիճակի սահմանադրական ամրագրումը, քանի որ պետությունների սահմանադրությունները համեմատաբար բարդ ընթացակարգով են փոփոխվում և առավել կայուն են:

Խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության դերակատարությունը կամ ազդեցության աստիճանը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ ***ա) պառլամենտական ընդդիմությանը վերապահված լիազորությունների ծավալ, բ) պառլամենտում քաղաքական ուժերի դասավորվածություն:***

Խորհրդարանական հանրապետություններում կարևոր հարցերից մեկը պառլամենտական ընդդիմության լիազորությունների ծավալի ընտրության հարցն է: Պառլամենտական ընդդիմությանը մի կողմից պետք է վերապահվեն այնպիսի լիազորություններ, որոնց միջոցով այն կկարողանա հավասարակշռել պառլամենտական մեծամասնությանը, իսկ մյուս կողմից չի խոչընդոտի պառլամենտական մեծամասնության գործունեությունը:

Պառլամենտական ընդդիմության լիազորությունների ծավալի վերաբերող հարկ է նշել, որ միջազգային փաստաթղթերում առկա են պառլամենտական ընդդիմության լիազորությունների նվազագույն շրջանակը ամրագրող դրույթներ[5], սակայն պառլա-

---

[1] Բացառությամբ Պորտուգալիայի սահմանադրության 114-րդ հոդվածի:

[2] Ալբանիայի սահմանադրության 147-րդ հոդված, Խորվաթիայի սահմանադրության 121-րդ հոդված:

[3] Խորվաթիայի սահմանադրության 72-րդ հոդված, Չեխիայի սահմանադրության 20-րդ հոդված, Ֆինլանդիայի սահմանադրության 25-րդ հոդված:

[4] Պառլամենտական ընդդիմության վերաբերյալ առանձին օրենքներ են գործում Ուկրաինայում, Պորտուգալիայում, Մակեդոնիայում, Նորվեգիայում:

[5] Տես Resolution 1601 of the Council of Europe, «Parliamentary Assembly on procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament», 2008

մենտական ընդդիմության լիազորությունների ամբողջական ծավալի հետ կապված հարցը ներպետական իրավակարգավորումների տիրույթում է[1]:

Խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության լիազորությունների իրական ծավալը պայմանավորող հաջորդ գործոնը պառլամենտում քաղաքական ուժերի դասավորվածությունն է: Այսպես՝ պառլամենտական ընդդիմության հիմնական լիազորություններից է որոշակի հարցերի վերաբերյալ նախաձեռնություններով հանդես գալը (օրինակ՝ կառավարությանը անվստահություն հայտնել, սահմանադրական դատարան դիմել), որոնց իրականացման համար անհրաժեշտ է որոշակի թվով պատգամավորների աջակցություն, հիմնականում՝ մեկ երրորդի, մեկ քառորդի կամ մեկ հինգերորդի[2]: Այս պայմաններում ակնհայտ է, որ այն դեպքում, երբ ընդդիմադիր խմբակցությունները առանձին վերցրած չունենան պահանջվող ձայների համամասնությունը և միմյանց հետ չհամագործակցեն, ապա պառլամենտական ընդդիմությունը գործնականում զրկվում է քննարկվող լիազորությունների իրականացման հնարավորությունից:

Վերը նշվածով պայմանավորված՝ կարևորություն է ձեռք բերում պառլամենտական փոքրամասնությունների (parlamentaryan miniority) պաշտպանության խնդիրը: Հատկանշական է այն, որ խորհրդարանական մի շարք պետությունների սահմանադրություններում նախատեսված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք միտված են պառլամենտական փոքրամասնությունների պաշտպանությանը, օրինակ՝ Մակեդոնիայում հարցապնդման իրավունք ունեն առնվազն հինգ պատգամավորներ, կամ Չեխիայում կառավարության անվստահության հարց կարող են նախաձեռնել առնվազն տասնհինգ պատգամավորներ:

Պառլամենտական ընդդիմության հնարավոր ազդեցությունը պառլամենտի որոշումների (օրենքներ) ընդունման վրա պայմանավորված է այն հանգամանքով, թե ձայների ինչ հարաբերակցությամբ են ընդունվում որոշումները: Խորհրդարանական հանրապետություններում, որպես կանոն, պառլամենտի որոշումները ընդունվում են կա՛մ ***քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, կա՛մ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ***[3]: Նշված դեպքերում, երբ պառլամենտում ձևավորվում է միակուսակցական կամ կոալիցիոն մեծամասնություն, որոշումների ընդունման գործընթացում պառլամենտական ընդդիմության դերակատարությունը խիստ նվազում է, քանի որ պառլամենտական մեծամասնությունը առանց պառլամենտական ընդդիմության աջակցության կարող է ընդունել որոշումներ, ինչը կարող է հանգեցնել պառլամենտում իշխող քաղաքական ուժի «բացարձակ» և «չզսպվող» իշխանության:

---

[1] Խորհրդարանական մի շարք հանրապետությունների (Ալբանիա, Բուլղարիա, Խորվաթիա, Գերմանիա, Հունաստան, Չեխիա, Իսլանդիա, Իտալիա) սահմանադրությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, պառլամենտական ընդդիմությունը օժտված է հետևյալ լիազորություններով՝ **ա)** օրենսդրական նախաձեռնության իրավունք, այդ թվում՝ մի շարք պետություններում սահմանադրությունում փոփոխություն իրականացնելու նախաձեռնության իրավունք, **բ)** պառլամենտի արտահերթ նիստ կամ նստաշրջան նախաձեռնելու իրավունք, **գ)** պառլամենտի քննիչ հանձնաժողով ստեղծելու իրավունք, **դ)** պառլամենտական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության իրավունք, **ե)** կառավարությանը հարցերով և հարցապնդումներով դիմելու իրավունք, **զ)** կառավարությանը անվստահություն հայտնելու նախաձեռնության իրավունք, **է)** սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին դիմելու իրավունք, **ը)** որոշ պետական պաշտոններում նշանակումների իրականացնելու համար թեկնածուների առաջադրման իրավունք:

[2] Ալբանիայում քննիչ հանձնաժողով կարող է ստեղծվել պատգամավորների մեկ քառորդի կողմից (սահմանադրության 77-րդ հոդված), **Բուլղարիայում** կառավարությանը անվստահություն հայտնելու նախաձեռնության իրավունք ունի պատգամավորների մեկ հինգերորդը (սահմանադրության 90-րդ հոդված):

[3] Ալբանիայի սահմանադրության 78-րդ հոդված, Բուլղարիայի սահմանադրության 81-րդ հոդված, Էստոնիայի սահմանադրության 78-րդ հոդված:

Իրավիճակը այլ է այն դեպքում, երբ պառլամենտում որոշումները ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների այլ համամասնությամբ, օրինակ՝ ***երեք հինգերորդ***[1]***, երեք քառորդ***[2] ***կամ երկու երրորդ***[3]: Այս դեպքերում, եթե պառլամենտում իշխանությունը չունի որակյալ մեծամասնություն որոշումների ընդունման գործընթացի վրա պառլամենտական ընդդիմությունն ազդեցության որոշակի լծակներ է ձեռք բերում: Իսկ այն դեպքում, երբ պառլամենտում իշխանությունը ունի որակյալ մեծամասնություն, կարող է առանց ընդդիմության աջակցության ընդունել որոշումներ[4], որի պատճառով պառլամենտական ընդդիմության դերակատարությունը կրկին նվազում է: Այս համատեքստում թերևս հարկ է նշել, որ խորհրդարանական կառավարման ձևի պետություններում սակավաթիվ են օրինակները, երբ պառլամենտում ձևավորվում է որակյալ մեծամասնություն, առավել հաճախ մեծամասնությունը ձևավորվում է քաղաքական կոալիցիա կազմելով:

Հարկ է նշել, որ որոշ պետությունների սահմանադրություններում ամրագրված են որոշակի այլընտրանքային մեխանիզմներ, որոնք միտված են պառլամենտական ընդդիմության դերակատարության բարձրացմանը: Օրինակ՝ Խորվաթիայում պառլամենտի քննիչ հանձնաժողովի նախագահը նշանակվում է պառլամենտի ընդդիմության ներկայացուցիչներից (սահմանադրության 92-րդ հոդված), կամ Հայաստանի Հանրապետությունում պառլամենտի նախագահի տեղակալներից մեկը ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորներից (սահմանադրության 104-րդ հոդված):

Ամփոփելով վերոգրյալը՝ խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության կարգավիճակի հետ կապված կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնադրույթները՝ ա) խորհրդարանական հանրապետություններում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև զսպումների ու հավասարակշռության ապահովման մեխանիզմները անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն պառլամենտ-կառավարություն դասական փոխհարաբերությունների տեսանկյունից, այլ նաև պառլամենտական մեծամասնության և փոքրամասնության, բ) խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության կարգավիճակի իրավական երաշխավորմանը վերաբերող ներպետական կարգավորումները տարբեր են, և որպես կանոն, պառլամենտական ընդդիմության կարգավիճակը սահմանադրորեն երաշխավորված չէ, սակայն սահմանադրություններում ամրագրված են որոշակի դրույթներ, որոնք առնչվում են պառլամենտական ընդդիմության կարգավիճակին, գ) խորհրդարանական հանրապետություններում պառլամենտական ընդդիմության դերակատարությունը կամ ազդեցության աստիճանը հիմնականում պայմանավորված է պառլամենտական ընդդիմությանը վերապահված լիազորությունների ծավալով և պառլամենտում քաղաքական ուժերի դասավորվածությամբ, դ) հաշվի առնելով խորհրդարանական հանրապետությունների պառլամենտական մշակույթին բնորոշ առանձնահատկությունները, պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև առկա արդի սահմանադրական մարտահրավերների համատեքստում՝ գտնում ենք, որ պառլամենտական ընդդիմությանը վերապահված լիազորությունների շրջանակը անհրաժեշտ է վերանայել՝ պառլամենտական ընդդիմության վերապահելով պառլամենտական մեծամասնությանը զսպող ու հավասարակշռող անհրաժեշտ և բավարար լիազորություններ:

---

[1]Ալբանիա սահմանադրության 125-րդ հոդված:

[2]Բուլղարիայի սահմանադրության 155-րդ հոդված:

[3]Խորվաթիայի սահմանադրության 83-րդ հոդված, Հունաստանի սահմանադրության 32-րդ հոդված:

[4]Այս մասին տես նաև՝ **Վ. Վ. Ստեփանյան,** Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» գիտական հանդես, 2017, №1 (22), էջ 3-10:

РОЛЬ ПАРЛАМЕНТСКОЙ ОППОЗИЦИИ В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОЙ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ

Айк Кесоян
Главный специалиста юридического департамента аппарата Премьер-министра РА, кандидат юридических наук

В статье исследованы некоторые вопросы, связанные со статусом парламентской оппозиции в государствах парламентской формы правления, в результате чего подчеркнута роль парламентской оппозиции в деле усмирений и обеспечения равновесия между законодательной и исполнительной ветвями государственной власти. Подняты вопросы регулирования, связанные с конституционным статусом парламентской оппозиции в парламентских республиках, а также основные факторы, обуславливающие роль или степень влияния парламентской оппозиции.

THE ROLE OF THE PARLIAMENTARY OPPOSITION IN THE CONDITIONS OF THE PARLIAMENTARY FORM OF GOVERNMENT

Hayk Kesoyan
The office of the prime minister of the Republic of Armenia, legal department, chief specialist, PhD

The article examined some issues related to the status of the parliamentary opposition in the parliamentary form of government, as a result emphasized role of the parliamentary opposition to ensuring the restraint and balance between the legislative and executive branches of state power. The article outlines the constitutional and legal status of the parliamentary opposition in the parliamentary republics, as well as the main factors contributing to the role or influence of the parliamentary opposition.

Բանալի բառեր- խորհրդարանական կառավարում, պառլամենտ, պառլամենտական ընդդիմություն, քաղաքական ընդդիմություն, զսպում և հավասարակշռում
Ключевые слова: Парламентское правительство, парламент, парламентская оппозиция, политическая оппозиция, сдержанность и баланс
Key words:parliamentary government, parliament, parliamentary opposition, political opposition, restraint and balance